

# ԱՃԱՊԻՆՔԻ ՊԵՐՈՒՄ

\*\*\*

Ու մի զբոլանք չէ ինձ համար  
Անգիտանալ բոլոր, բոլոր  
Բարբառները այս աշխարհին.  
Բաւ է հանգչիլ լընակին քով՝  
Կանայ-թաւիշ գուղձի վրայ,  
Կըրկնել վանկը վետմեռութիւն,  
Եւ ունենալ իբր ունկնդիր  
Պիշ-պիշ նայող եղնիկներին,  
Թո՛ղ լընի խորն հոգիս ցոլայ,  
Եւ սաղարթներն հովհար լինին.  
Թո՛ղ կաթնաղբիւր լինի արփին  
Եւ եօ հանգչիմ բընութեան գիրկ,  
Որ և մայր է իմ մայրիկին:

Փարիզ

ՀԱՅԿ-ԱՐԱՐ

## ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

### ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾՈՒՄ

(Շար. տես բազմ. 1926 էջ 287)

Յորոյտ կ'առաջարկէ ջլախտներու նոր  
գարման մը՝ գիտակցականի փոխել ան-  
գիտակցականի, Մտասեռութիւն, տխրու-  
թիւն, ջլազարութիւն կ'անհետանան՝ երբ  
ենթական կը գիտակցի ատունց ծագման  
պատճառներուն:

Քուճիկու համար ջլային հիւանդութիւն  
մը՝ գոհացնելու է վանուած զգացումը, որ  
պատճառն է ջլախտին: Գոհացումը պիտի  
լնջէ՝ անգիտակցականէն ախտին պատճա-  
ռը, որ արմատացած էր: Յանկութիւն և  
զգացում ջնջելով, անունց վրայ չմտա-  
ծելով, յագուրդ չեն գտնիք և կ'անհե-  
տանան: Հակասական չէ՝ ընդունիլ թէ ոչ  
մէկ տպաւորութիւն կը կորսուի անգիտակ-  
ցութեան համար, նոյն իսկ երբ գիտակ-  
ցութիւնը կ'անգիտանայ, բայց երբ ան-  
գիտակցականը գիտակցականի կը փոխուի՝  
թէ՛ կը մոռցուի և թէ՛ արմատախիլ կ'ըլ-  
լայ անգիտակցականէն: «Մեր վանում:

նեը տղայութենէն կ'ազդեն մեր վրայ,  
ենթագիտակցական կը դառնան այդ ջլու-  
ջանին և կը պահեն իրենց ոյժը մինչև  
իրենց գոհացում ստանալը » (Հոգեվեր-  
լուծում, էջ 26) Մանկութեան ատեն կրած  
տպաւորութիւնները շատ աւելի ուժեղորէն  
կը դրոշմուին անգիտակցութեան մէջ,  
կեանքի ընկալուչ ջրջանին, ճան ու և է  
տարիքի: Թէ՛ն կը յիշէ սպանիական դե-  
պանի մը սենեկապանին պարագան տենդի  
մը բռնուած ատեն, զատանցանքի պա-  
հուն, կը յիշէր դիւանագիտական խօսակ-  
ցութիւնները, զորս լսած էր սպասար-  
կութեան ատեն:

Յորոյտի տեսութեան ատանցքը կը կազ-  
մէ սեռականութիւնը: Մարդուն ձգտում.  
նեը կը բաժնուի երկու խումբի՝ պահ-  
պանման ձգտումներ, որոնց ամբողջութիւնը  
կը կազմէ հար. զգացական ձգտումներ, որոնց  
ուղղակի կամ անուղղակի սեռականութե-  
նէն առաջ կու գան: Զգացումները սեռա-  
կանութեան ծնունդ են, երազները ման-  
կութեան ատեն կուտակուած տարրերէ  
կազմուած են: Երախային գործունէու-  
թիւնն անգամ, ծծիկու բնազդն իսկ, սե-  
ռային դրոշմի արդիւնք է: Յորոյտ գտած  
է բազմաթիւ երազներ և ջլախտի պա-  
րագաներ, որոնք կենսաբանական բնազդն  
կը սերին: Ու և է առարկայ հանդէպ ցոյց  
արուած հոգածութիւնը զբոլականութեան  
արդիւնք է: Անհատը գործածած առար-  
կաներուն հանդէպ ալ տոգմանք կը զգայ!  
Գրականութիւն, գիտութիւն, արուեստ,  
կրօն մարդկային տագմանքի արտայայտու-  
թիւններ են: Զգիւտուած տեսութենէն Յորոյտ  
մարդկային ամէն մէկ գործունէութեան,  
ամէն մէկ ջարժումի մէջ սեռականութիւն  
կը նշմարէ: Հոգեվերլուծման մեթոտը կի-  
րարկելու էր նախապէս Յորոյտի վրայ,  
յայտարարելու համար թէ մեթոտ ու տե-  
սութիւն տագմանքի արդիւնք են: Յորոյտ  
յոռնտես է. տղուն և մարդուն մէջ ախ-  
տաւոր ձգտումներ կը տեսնէ: Մարդուն  
բարձրագոյն հակումները, ամէնէն վաճա-  
րագիրը ամէնէն տխուր բնազդներն կը  
ծնին:

Անշուշտ Ռուսոյի նման լաւատես ըլլալու չէ։ Մարդկային բնութիւնը գերաւ զանցօրէն բարեւ չէ, ընկերութիւնը չէ որ կը խաթարէ զայն։ Վկայի բնազդներ և ցանկութիւն ապահովարար կը գտնուին մարդուն մէջ մանկութեան ատեն իսկ։ Ամէն ձգտում կրնայ խոտորել, ամէն բնազդ վատթարանալ, բայց բնութիւնը ճակատագրուած չէ ոճրագար ըլլալու։ Ստորին բնազդները կրնան ենթարկուիլ բարձրագոյն հակումներուն։ Զղագարութեան պատճառը միակ յիպոթոզ չէ, առգ մը, փառամոլութիւն, վախ, կրնան նոյն հետեանքն ունենալ։

Սեռականութիւնը մեծ դեր կը խաղայ շատ մը կեանքերու և կեանքի որոշ շրջաններու մէջ։ Ասով կարելի չէ հետեցնել ֆրոյտականներու հետ՝ թէ սեռականութիւնը մեր բոլոր ձգտումներուն արմատն է, մեր բոլոր գործերուն յայտնի կամ գաղտնի շարժառիթը։ Անգիտակցութեան մէջ թաղուած այդ բնազդը, զսպուած այդ ոյժը, կը յայտնուի երազներու, վրժած գործերու միջոցաւ կ'ընէ Ֆրոյտսէ կրազներն ու ջլախտներն ալ կը կազմուին մանկութեան ատեն ստացուած տպաւորութիւններու տարրերով, ուստի հետևողական ըլլալու համար կ'ընդունի որ մանկութիւնը գերազանցօրէն սեռական տարիքն է, մանկական տարիներու և մանաւանդ արբունքի ատեն ստացուած ուղղութիւնը վճռական ազդեցութիւն ունի մարդկային կեանքի մնացած մասին վրայ։

Մանկան բնախօսութիւնը ուսումնասիրողներ հաստատած են ատուզիւ աղածքի տարիքի գերազանցօրէն ընկալուչ յատկութիւնը, հետևաբար դաստիարակութեան ամենակարեւոր դերը այդ տարիքի միջոցին։ Ֆրոյտս կը շեշտէ այդ կարևորութիւնը կը սխալի սակայն երբ կ'ընդունի թէ արբունք և անբնականոն վիճակ սերտ տարնչութիւն ունին։ Ֆրանսացի հոգեբաններ Պիյէն և Սիստոն կը հաստատեն թէ «8-10 տարեկան այնքան անբնականոն տղաք կան որ ստիպուած ենք ընդունել, իսկ արբունքի մերձեցման և մտային ան-

հաստատութեան տարնչութիւն չունենալը» (Les e. anorm. 1907 Colin p. 28-9)։ Արդէ մեծահոշակ բժիշկ հոգեբան մը կը գրէր. «Միայն նկատու առնելու չէ մարմնական արբունքը, այլ բարոյականը որ աւելի ետքը կ'արտայայտուի։ Տարիք մը կայ, զանազան կլիմայի և միջավայրի համեմատ, ուր կեանքի բուրդը կարեւոր հարցերը միասնաբար կը ներկայանան։ Ասպարէզի բնտրութիւն, ապրուստի հարց, կրօնական խնդիրներ մարդը զայս կը զրաւեն պատանիին հոգին»։

Այնչաւ տարի թրէսպէթէ բժշկական համաժողովին մէջ աք. Ուայս կը յայտարարէր. «Ֆրոյտս ծայրայեղօրէն սահմանափակած էր սեռականութեան շրջանաւ կին մէջ ներքին պայքարները, բախումները. փողոցային մէջ միշտ կ'երթալու վախը ջգային հիւանդութեան տեսակ մըն է և ակնառու օրինակ մը ֆրոյտականութեան ծայրայեղութեան, Յանկարծ ենթական նեղութիւն մը կը զգայ և փողոցին մէջ կը վախնայ որ վար իյնայ. լսելու է թէ ինքնաթիւաղործութիւն է։ Ինչո՞ւ սակայն, Լուսնոտները նոյն վախը չունին, թէ և գիտեն թէ ամէն պարագայի տակ կրնան նոպային ենթարկուիլ։ Վերլուծելով այդ վախը՝ կը տեսնենք որ վերադարձ մըն է երախային մօրմէն բաժնուելու վախին, ինչպէս երախան չ'ուզեր մայրը թողուլ, այսպէս ալ ենթական կը վախնայ միշտակ մնալու, անձանթ տեղեր երթալու։ Այս վիճակը կը յայտնուի յաճախ երբ վերջին քննութիւններն պիտի անցնին, անպատեղ մը պիտի ընտրէ, անկախ կեանքի մէջ պիտի նետուի»։

Ներկայ բարոյականը պայմանադրական է ֆրոյտականներու համար, ընկերութեան մէկ արտաղորդութիւնը։ Մենդական պատճառներով, ցաղացակրթութեան ներկայ պայմաններու տակ կը զսպուի, կը վանա ուր սեռականութիւնը, որ իր վրէժը կը

1. P. Janet: Obsess. et Psychasténie 1903 t. 1. p. 618.

լուծէ ջրային դրութեան վրայ յարձակելով, կենսաբանական այս վարկածը կրնայ հիմ ծառայել ընկերային ծայրայեղ վարդապետութիւններու ֆորյոյտ կը սարսափի հեռեանքներէն, Լաւատեսութեամբ դաստիարակական մեթոտ մը կ'առաջարկէ՝ վերացնել հիմնական հակումները մանկութենէն սկսեալ: «Վերացումը (sublimation) սեռականութենէ առաջ եկած ծայրայեղ զրգոտմներուն նոր ուղղութիւն մը կու տայ: Այսպէս վտանգաւոր տրամադրութենէ կ'արտադրուի հոգեկան նոր զործունէութիւն մը»: Անշուշտ կարելի է ազնուացնել կիրքերը, բայց երբ կարելի է ատրկա, կը նշանակէ թէ խաթարուած չեն Գախտարանական և հակաբնական չեն էապէս Պատմութիւնը, անհատական փորձառութիւնը, բնախօսութիւնը ցոյց կու տան որ զսպուած և վանուած սեռական նութիւնը յաճախ ջլախտաւորներ չ'արտադրիր: Զգաստ կեանք վարող այնքան անհատներ կան որ բնականոն հոգեկան վիճակ ունին, «Սեռականութեան վանուումով ջրային և մտային հաւասարակշռութիւնը կարելի է պահել կատարելապէս» նոյն գաղափարը արտայայտած են Ֆրէդ, Ֆորէլ, Մանթեկացցա և 159 բժիշկներ 1902ի Պրիւքսէլի բժշկական համաժողովին մէջ:

Զգայական կեանքի ձգտումները համարմբուած են տեսակի պահպանման ուժական վախճանականութեան շուրջ, Բայց մարդը մտային ձգտումներ ալ ունի, որոնք տարբեր, նոյն իսկ ներհակ յատկանիշներ ունին: Մտային ձգտումները կը կրթութիւն կամաւոր գործունէութեամբ, դատողութիւններով, Զգայական ձգտումները մեծ մասամբ կ'արտայայտուին տարբեր չին, այլ բարձրագոյն գործունէութեան մը մեքենական նութիւնները: Դաստիարակութեան մէջ հոգեվերլուծութեամբ կիրարկել զօտար է: Սթերն գիտել կու տայ որ չափահասին

օգտակար համարուածը պատահիին համար թոյն կրնայ ըլլալ: Երազներու, պատկերներու վերլուծումները, անգիտակից ձգտումներու վանումներն արգելելը, գիտակցութեան դաշտը կ'ողողեն և բարոյական ամէն հունձը կ'եղծանեն: Անշուշտ ջլախտի տրամադիր անձ մը փոխան վանելու, բացուելու է յաճախ, վստահելու է մտահոգութիւնները վստահելի անձի մը: «Մարդկային հոգեկան գործունէութեան ազնուագոյն մասը արգելական է» կ'ըսէր իտալացի հոգեբան Մորուէլլի: Եթէ կամքը չհակակշռէ, չարգիլէ զգայական և զգացական ձգտումները, սեռականութեան շուրջ պիտի համարմբուին: Ֆորյոյտ կը շեշտէ մանկական կեանքի կարեւորութիւնը՝ ձգտումներու ուղղութեան համար: Մանկավարժ մը կը գրէր արդէն. «Որքան ալ հակելու է: Անպատշաճ խօսակցութիւն մը կրնայ դժբախտ հետեանքներ ունենալ»:

Հոգեվերլուծութեամբ գիտակիցն անգիտակիցով բացատրելու մեթոտ՝ կրնայ օգտակար ըլլալ արտաբանական հոգեբանութեան: Անգիտակցութիւնը մեծ դեր ունի մեր կեանքին մէջ, բայց ոչ միակ դերը: Լայպնից ըսած էր արդէն, որ «Յաճախ մեր մէջ առաջ կուգայ գործունէութիւն մը պատճառաւ անզգալի տպաւորութիւններէ, որոնց արդիւնք են բնագրական նախասիրութիւններ, ճաշակներ, ականց պատճառի տխրութիւններ»: Կրօնը մարդուն հոգիին ձգտումն է դէպի վերագրականը, բացարձակը, քան թէ քախօսական ոյժի մը արտայայտութիւնը: Կրօնը գիւտ մըն է իմացական և ոչ թէ սեռային բնագործ գոհացական գոգորդութիւնը: Սեռականութիւնը կենդանիներու մէջ այնքան հզօր ոչ մէկ ձգտում կազմու է, իմացական ոչ մէկ արտայայտութիւն ունեցիր է:

Թ. ԳԱՐԵԿԵԱՆ

1. Régis et Hesnard, La Psych. des Névroses et des Psychoses 1914 p. 144.

2. P. Janet, Automatismes psychologiques 1889 Alcan p. 473-4.